ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Կապանի տոնը

Այսօրվա թերթ
www.syuniacyerkir.am

ԵՐԵՔՇԱԲԹԻ
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011թ. • № 18 (237)

ՀԻՄՆԱԴՐԻՉ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

2 հոկտեմբերի 2011թ., Կապանի քաղաքապետ Արթուր Աթայանը:

Լուսանկարը՝ Հայկ Բաղդասարյանի

.... Չորավորը մարդն է, աշխարհը պահողը՝ սերը

Համաժողովրդական տոնը, որ խոստացել էր Կապանի քաղաքային իշխանությունը, կայացավ 2011թ. հոկտեմբերի 1-2-ին: Տոնակատարության մասին հրապարակումներն ու լուսանկարները՝ 5-12-րդ էջերում:

Կապանի տոնին առանձնահատուկ երանգ հաղորդեց վաստակավոր կոլեկտիվ պարի պետական անսամբլը (գլխավոր բալետմայստեր՝ ՀՀ վաստակավոր արտիստ Ասատուր Կարապետյան, գեղարվեստական մասի ղեկավար՝ Հայկ Գրիգորյան, տնօրեն՝ Էրիկ Չանչուրյան): Անսամբլը հիանալի պահեր պարգևեց հանդիսականին՝ հավաստելով, որ մեր նշանավոր պարողներին փոխարինելու է եկել շնորհալի մի սերունդ: Տե՛ս նաեւ էջ 11-ը:

Լուսանկարը՝ Հայկ Բաղդասարյանի

Տոնի օրագիրը

Հոկտեմբերի 1

12.00
Վահանավանք - 1100
Հոգեւոր եւ հայրենասիրական երգերի համերգ միջնադարի նշանավոր վանական համալիրում՝ Վահանավանքում («Հայաստանի փոքրիկ երգիչներ», գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ Տիգրան Հեքեքյան):

14.00
Լեռնագործների փողոցում խաղահրապարակի բացում

19.00
Հանդիսավոր նիստ Կապանի մշակույթի կենտրոնում

19.45
Հայաստանի պարի պետական անսամբլի համերգ

Հոկտեմբերի 2

9.00
Փողային նվագախմբի ելույթ

9.30
Ընդունելություն Կապանի քաղաքապետարանում

10.30
Այցելություն Բաղաբուրջի հուշահամալիր

11.00
Պատարագ Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում

11.30
Մատաղի արարողություն

12.00
Խաղաղության պուրակի բացում

13.00
Այց Կապանի երկրագիտական թանգարան, ապա՝ № 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն

14.00
Շինարարների թաղամասում խաղահրապարակի բացում

14.30
Այց Շմավոն Մովսիսյանի անվան թանգարան

14.45
Բաղաբերդ թաղամասում խաղահրապարակի բացում

19.00
Արման Հովհաննիսյանի մենահամերգ Կապանի մարզադաշտում

22.00
Հրավառություն

Colour Pages_5-12.indd 1 25.11.11 4:17:58 PM

Կապանի տուն
Սյունյաց երկիր
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉ «ՍՅՈՒՆԻՔԻ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 18 237
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

էջի լուսանկարները՝ Հայկ Բաղդասարյանի

Վերստին փառավորվեց հնամեկի ոստան Կապանը

2011թ. հոկտեմբերի 1-2-ին հերթական անգամ տեղի ունեցավ Կապանի տոնը: Երկու այդ օրը, իսկապես, մարզկենտրոնում վերածվեց ցնծապարար տոնակատարության: Կապանցիները եւ հյուրերը տոնին մասնակցում էին միմյանց սիրելու, գնահատելու, ոգեշնչելու մաքրամաքուր ցանկությամբ:

2 հոկտեմբերի 2011թ., մատաղի արարողություն Կապանի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակում

2 հոկտեմբերի 2011թ., զինվորական նվագախմբի ելույթը Կապանի քաղաքապետարանի մերձակա զբոսայգում

Կապանի քաղաքապետարանի բակում

2 հոկտեմբերի 2011թ., դրվագ Կապանի քաղաքապետարանում տեղի ունեցած պաշտոնական ընդունելությունից: Աջից ձախ՝ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյան, ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Վաչե Տերտերյան, Կապանի քաղաքապետ Արտուր Աթայան, Կապանի փոխքաղաքապետ Վարդան Գեւորգյան

Տոնի առթիվ պատրաստված տորթը

Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը շնորհավորում է Կապանի քաղաքապետարանում հոկտեմբերի 2-ին տեղի ունեցած ընդունելության մասնակիցներին:

№ 18 237
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 ● (091) 45 90 47 ● (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Կապանի տոն
Սյունյաց երկիր
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՄԱՅԻՍԻ 4-ԻՑ

Լուսանկարը՝ Ա. Նավասարդյանի

«Հայաստանի փոքրիկ երգիչները» Կապանում էր առաջին անգամ

Քաղաքի տոնին նվիրված միջոցառումները սկսվեցին հոկտեմբերի 1-ին: Կեսօրին Վահանավանքում նախատեսված էր երգչախմբային արվեստի միջազգային ֆեդերացիայի կողմից «Աշխարհի լավագույն մանկական երգչախումբ» տիտղոսի արժանացած, Եվրոպայի մշակույթի դեսպան, միջազգային մրցույթների դափնեկիր «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի համերգը: Բաղաց անտառի վրա միալար անձրեւ էր տեղում, թվում էր, թե միջոցառումը տապալված է, բայց այդպես չէր կարծում երգչախմբի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Տիգրան Հեքեքյանը:

«Համերգն անպայման պիտի կայանա»: Վերաշինված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կամարների տակ հնչեց հոգեւոր երաժշտություն՝ Մաշտոց, Եկմալյան, Կոմիտաս, ժամանակակից հայ կոմպոզիտորների հոգեւոր ստեղծագործություններ: **«Աշխարհի շատ եկեղեցիներում ենք երգել, նաեւ Փարիզի Աստվածամոր տաճարում, բայց այս մեկն ուրիշ է, հիացմունքի է արժանի այն, որ մարդիկ երկար ճանապարհ են կտրել հոգեւոր երաժշտություն ունկնդրելու համար,** – երգչախմբի համերգից հետո ասաց Տիգրան Հեքեքյանը, – **հոգեւոր երաժշտությունը երգչախմբային արվեստի հիմքն է, բայց նրա երկրպագուները սակավ են, ուստի հարգանքի է արժանի կապանցի հանդիսականը, որ կարողանում է ընկալել եւ գնահատել հոգեւոր երաժշտությունը: Երգչախմբերը սովորաբար որոշակի ուղղվածություն են ունենում, ոմանք դավանում են հոգեւոր երաժշտությունը, ոմանք՝ դասական, ոմանք՝ ժամանակակից: Մենք փորձում ենք երեխաների մեջ ներարկել այդ բոլոր ոճերը եւ դրանք փոփոխել երգելու ընթացքում: Հաճելի տպավորություններով ենք հրաժեշտ տալիս կապանցի հանդիսականին եւ նաեւ ուրախ ենք, որ Կապանը շարունակում է հոգեւոր ավանդույթների կենտրոն լինել»:** Վահանավանքում կայացած համերգին մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը եւ Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը

Նախօրեին երգչախումբը ելույթ ունեցավ Կապանի արվեստի քոլեջի դահլիճում, որն այս անգամ լեփ-լեցուն էր հանդիսականներով: Երգչախմբի երգացանկն ավելի հարուստ էր. բացի հոգեւոր երաժշտությունից հնչեցին նաեւ արեւմտաեվրոպական, ամերիկացի եւ հայ կոմպոզիտորների հոգեւոր ստեղծագործություններ, նաեւ՝ ջազային երաժշտություն: Դահլիճը հավանությամբ ընդունեց փոքրիկ երգիչների կատարումները: Համերգից հետո Տ.Հեքեքյանը երախտագիտություն հայտնելով ընդունելության համար, ասաց, որ մարզի ղեկավարության հետ նախատեսում են Կապանի արվեստի քոլեջում կազմակերպել միջազգային փառատոներ, ինչպես երգչախմբային արվեստի, այնպես էլ երգեհոնային երաժշտության, քանի որ արվեստի քոլեջի դահլիճն այդ հնարավորությունն ապահովում է՝ իր հրաշալի ակուստիկայով եւ երգեհոնով: Կապանի հանդիսականն այս անգամ, իրոք, վարձատրված հեռացավ դահլիճից՝ գոհ փոքրիկների կատարողական արվեստից:

«Եթե յուրաքանչյուր հայ անհատ ունենար այն խիզախությունը, պատվախնդրությունը, նվիրումն ու ոգեւորությունը, որ ցուցաբերեցին երգող երեխաներն ու նրանց տաղանդավոր մաեստրոն, ապա մենք անշուշտ հզոր ժողովուրդ կդառնայինք», – 2002-ին գրել է սփյուռքի «Ապագա» շաբաթաթերթը:

Երգչախումբը ստեղծվել է 1992 թվականին Տիգրան Հեքեքյանի կողմից՝ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի եւ Երեւանի քաղաքապետարանի հովանավորության ներքո, համերգային շրջագայություններ է ունեցել Ռուսաստանում, Հունաստանում, Կիպրոսում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունում, Եգիպտոսում, Հարավային Աֆրիկայում, Չինաստանում, Լեհաստանում, Բելգիայում, Կանադայում, ԱՄՆ-ի 20 նահանգներում: Սյունիքում հանդես է գալիս առաջին անգամ: Ի դեպ, Վահանավանքից հետո երգչախումբը համերգով հանդես եկավ Քաջարանում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Պարգեւները գտան տերերին

Կապանի արժանավոր մարդկանց մեծարումը տեղի ունեցավ Կապանի մշակույթի կենտրոնում հանդիսավոր նիստի ընթացքում:

Կապանի օրվան նվիրված նախ՝ ներկաներին ողջույնի խոսքով դիմեց Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, ով իր ելույթում անդրադարձ կատարեց դեպի 1990-ականների սկիզբը, երբ շրջափակման, ռեսուրսների պակասի, խորհրդային ժամանակաշրջանի տնտեսական կապերի խզման պատճառով նախկին հզոր արդյունաբերական քաղաքը հայտնվել էր փակուղում: Սակայն հենց կապանցու նվիրվածության շնորհիվ, ասաց նա, քաղաքն էապես շտկեց մեջքը, եւ հաջողություններ գրանցեց հանքարդյունաբերության, քաղաքաշինության եւ մյուս ոլորտներում: Այսօր մեր պետության բյուջեն աճել է բազմաթիվ անգամ եւ դրան համեմատ առաջնային ուշադրություն է հատկացվում համայնքների զարգացմանը: Վերջին տարիներին հաջողվեց վերականգնել եւ ըստ էության նորից կառուցել Կապանի գազամատակարարումը, էականորեն բարելավել ջրամատակարարումը, վերականգնել քաղաքի փողոցների լուսավորությունը, իրականացնել ասֆալտապատման ու բակերի հիմնանորոգման մեծածավալ աշխատանքներ: Կապան քաղաքում էական լուծում է ստացել բնակչության ամենացավոտ հարցերից մեկը՝ հարթ ու լանջավոր տանիքների նորոգման խնդիրը: **«Այսօր առանց վարանելու կարող ենք պնդել, որ Կապանը կայուն զարգացող քաղաք է, որը հպարտությամբ է նայում 16-դարյա անցյալին եւ վստահությամբ՝ ապագային»,** – այսպես ավարտեց իր ելույթը Սյունիքի մարզպետը:

Լուսանկարը՝ Բաղդասարյանի

Տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը նկատեց, որ Հայաստանի հարավային դարպասով՝ Սյունիքի մարզկենտրոն Կապանով են հանրապետություն այցելող հյուրերը պատկերացում կազմում երկրի մասին: Այս համատեքստում բանախոսը փաստեց, որ Կապանն օրաւոր շենանում եւ գեղեցկանում է եւ հավակնում է վերագտնել արդյունաբերական քաղաքի իր նախկին համբավը:

Ներկաներին տոնական ուղերձ հղեց Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը. *«Արդեն գեղեցիկ ավանդույթ է դարձել ամեն տարի նշել մեր հայրենի Կապանատան տոնը: Քաղաքները, ինչպես եւ մարդիկ, ունեն իրենց կենսագրությունն ու ճակատագիրը: Մարդը Կապանի տարածքում բնակություն է հաստատել վաղնջական ժամանակներից: Բայց քաղաքի ծննդյան վկայականն իրավամբ կարելի է համարել Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը», որտեղ մեծանուն պատմագիրը Կապանի մասին վկայություն է հաղորդել V դարից: Այդ ժամանակներից շատ ջրեր են հոսել: Իր հայրենիքի նման Կապանն էլ պայքարել է իր ազատության համար, ձեռքից ձեռք անցել, դարձել միջնադարյան թագավորության մայրաքաղաք, Դավիթբեկյան հայկական իշխանության կենտրոն, Նժդեհի ղեկավարած գոյապայքարի օջախ: Եվ միշտ, մեծն Ալիշանի բնութագրությամբ, մնացել ամենահամառագույնն ազգային ոգու եւ ավանդների*

Շարունակությունը՝ էջ 8

Կապանի տուն
Սյունյաց երկիր
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉ «ՀԱՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 18 237
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

Պարգեւները գտան տերերին

Սկիզբը՝ էջ 7

պահպանության մեջ:

Խորհրդային իշխանության տարիներին Կապանը դարձավ արդյունաբերական խոշոր կենտրոն: 1938թ. հոկտեմբերի 1-ին Ղափան բանվորական ավանը ստացավ քաղաքի կարգավիճակ: 1991թ. Ղափանը վերանվանվեց Կապան: 1995թ. դեկտեմբերի 4-ից Կապանը Սյունիքի մարզկենտրոնն է:

Կապանի պատմության մեջ նոր էջ բացվեց հայոց նորանկախ պետականության կազմավորումով: Հայոց նորօրյա ազատամարտում, հավատարիմ Հայրենական մեծ պատերազմում իր 7000 մարտիկների ոգում, նորից ոտքի կանգնեց Կապանն ու կապանցին՝ իր լավագույն զավակների կյանքի գնով պաշտպանելով հայրենի եզերքը: Այդ օրերից շատ ժամանակ չի անցել, բայց մարզկենտրոնն անճանաչելիորեն փոխվել է: Իսկ որ ամենակարեւորն է՝ փոխվել են մարդիկ. եթե նկատել եք, նրանց աչքերին արդեն ժպիտ կա:

Կապանում գործող երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցները, մշակույթի կենտրոնն ու թանգարաններն ապահովում են, որ համաչափ բաբախի քաղաքի մշակութային զարկերակը: Նույնը կարելի է ասել սպորտի բնագավառի մասին: Դրա վառ ապացույցն են այն մրցանակները, որոնք նվաճել ենք ոչ միայն հանրապետական, այլեւ միջազգային մրցումներում:

Համոզված ենք, որ կապանցու իմաստությունն ու աշխատասիրությունն, իր քաղաքի նկատմամբ անսահման սերը կնպաստեն մեր հայրենի քաղաքի հետագա բարգավաճմանը:

Շնորհավո՛ր տոնդ, Կապան: Շնորհավո՛ր տոնդ, սիրելի կապանցի»:

Ուսուցչի օրվա առթիվ մի խումբ մանկավարժներ եւ պատերազմի վետերաններ քաղաքապետի կողմից արժանացան դրամական պարգեւների: Իսկ «Կապան» ոսկե հուշամեդալով պարգեւատրվեցին «Կապանի բժշկական կենտրոն» ԲԲԸ մանկական բաժնի վարիչ Լարիսա Ջհանգիրյանը, Արցախյան պատերազմի մասնակից, դեսանտագրոհային գումարտակի հրամանատար, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանակիր, փոխգնդապետ Արարատ Մանուչարյանը, Երկրապահ կամավորականների միության Կապանի երկրապահ ջոկատի հրամանատար Մանվել Օհանյանը: Արցախյան պատերազմի մի խումբ ազատամարտիկներ պարգեւատրվեցին ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյան», «Ծովակալ Իսակով», «Դրաստամատ Կանայան» մեդալներով: Պարգեւները նրանց հանձնեց ՀՀ պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության զորքերի վարչության պետ, գնդապետ Նիկոլայ Բաբայանը, ով հանդես եկավ շնորհավորանքի խոսքով, նաեւ անդրադարձավ հակաօդային պաշտպանության ուժերի, մասնավորապես, Կապանում տեղակայված ՀՕՊ զորամասի մարտական պատրաստականությանը՝ փաստելով, որ Կապանի օդային տարածքը հուսալիորեն պաշտպանված է:

Հանդիսավոր նիստին տոնական երանգներ հաղորդեց վաստակավոր կոլեկտիվ պարի պետական անսամբլը (գլխավոր բալետմայստեր՝ ՀՀ վաստակավոր արտիստ Ասատուր Կարապետյան, գեղարվեստական մասի ղեկավար՝ Հայկ Գրիգորյան, տնօրեն՝ Էրիկ Չանչուրյան): Անսամբլը հիանալի պահեր պարգեւեց հանդիսականին՝ հավաստելով, որ մեր նշանավոր պարողներին փոխարինելու է եկել շնորհալի մի սերունդ:

Համերգը (նույնն է, թե հանդիսավոր նիստը) ավարտվում էր, երբ դահլիճ մտավ Կապանի «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության պատվիրակությունը՝ ձեռնարկության սեփականատեր, «Դանդի փրիշս մեթլզ» ընկերության նախագահ եւ գործադիր տնօրեն Ջոնաթան Գուդմանի գլխավորությամբ: Եղանակային պայմանները խանգարեցին նրան ժամանակին ներկայանալ միջոցառմանը: Վերջինս եւս շնորհավորանքի խոսքեր հղեց Կապանի տոնի առթիվ եւ ներկայացրեց այն ներդրումները, որոնք «Դինոյի» կողմից կատարվել են մարզկենտրոնում: Ջոնաթան Գուդմանը մարզպետարանի կողմից արժանացավ «Ակսել Բակունց» հուշամեդալի:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Լուսանկարը՝ Հայկ Բաղդասարյանի

ՀՀ ՊՆ հակաօդային պաշտպանության վարչության պետ, գնդապետ Նիկոլայ Բաբայանը պարգեւ է հանձնում ազատամարտիկ Վարդան Հարությունյանին:

Լուսանկարը՝ Հայկ Բաղդասարյանի

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ

Լուսանկարը՝ Ամոնիցոնոյ

ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ
Տարածքային կառավարման նախարարի տեղակալ

Լուսանկարը՝ Հայկ Բաղդասարյանի

ԱՐՏՈՒՐ ԱԹԱՅԱՆ
Կապանի քաղաքապետ

Լուսանկարը՝ Ամոնիցոնոյ

ՋՈՆԱԹԱՆ ԳՈՒԴՄԱՆ
«Դանդի փրիշս մեթլզ» ընկերության նախագահ

Լուսանկարը՝ Հայկ Բաղդասարյանի

2 հոկտեմբերի 2011թ., Կապանի մշակույթի կենտրոնի դահլիճում

Colour Pages_5-12.indd 4 25.11.11 4:18:00 PM

№ 18 237
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ԱՌՀՍՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԹԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿՈՊԱՆ, ՇԱՀՈՒՅՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Կապանի տոնը
Սյունյաց երկիր
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՑ

Կապանցիներին շնորհավորելու եր եկել նաեւ Հայաստանի պարի պետական անսամբլը

Վերոնշյալ լուսանկարները՝ Գ.Ասատրյանի

Հայաստանի պարի պետական անսամբլը կազմավորվել է 1958 թվականին Գեորգի Ասատրյանի, Էդուարդ Մանուկյանի, կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի նախաձեռնությամբ: 1968 թվականից անսամբլի ղեկավարումը վստահվում է տաղանդավոր պարուսույց, ՀՀ վաստակավոր արտիստ Վանուշ Խանամիրյանին, ում հաջողվում է բեկում մտցնել պարարվեստի պատմության մեջ՝ հայկական պարը դարձնելով ամենուրեք ճանաչելի: 1993 թվականից անսամբլը ղեկավարում էր Սուրեն Չանչուրյանը, ում վիճակված էր անցումային ծանր ժամանակաշրջանում պայքարել պարարվեստի գոյատեւման եւ հետագա զարգացման համար:

Տոնի ավարտը՝ խաղախային մարզադաշտում

Կապանի տուր
Սյունյաց երկիր
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 18 237
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

Խաղաղության պուրակի բացումը

Հոկտեմբերի 2-ին Շահումյան փողոցում բացվեց «Խաղաղություն» անունը կրող պուրակը: Հանդիսավոր բացմանը ներկա էին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը, հյուրեր, քաղաքի հարյուրավոր բնակիչներ: Քաղաքապետ Ա.Աթայանի եւ մարզպետ Ս.Խաչատրյանի խոսքերով՝ ամենեւին պատահական չէ ընտրված պուրակի անունը՝ 19 տարի առաջ այժմյան պուրակի տեղում, պատերազմական գործողությունների ժամանակ, թշնամու ռումբից զոհվեց 20 խաղաղ բնակիչ: Զոհերի հիշատակին այստեղ կանգնեցվել էր խաչքար, որը հետագայում տեղափոխվեց Բաղաբուրջի հուշահամալիր: Պուրակի բացմանն աջակցել են Կապանի քաղաքապետարանը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» եւ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունները, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը: Կապանի քաղաքապետ Ա.Աթայանը ելույթում շնորհավորեց թաղամասի բնակիչներին՝ ինչպես Կապանի օրվա, այնպես էլ Խաղաղության պուրակի բացման առթիվ, շնորհակալություն հայտնեց հովանավորներին՝ պուրակի կառուցման աշխատանքներին աջակցելու համար: Նա, մասնավորապես, ասաց. *«Սիրելի՛ կապանցիներ, մեծարգո՛ հյուրեր, շնորհավորում եմ բոլորիս՝ այս նախաձեռնության հաջող ավարտի կապակցությամբ: Ուրախ եմ, որ մեր քաղաքում հերթական հանգստյան գոտին ենք կառուցել, եւ հիմա արդեն վստահաբար կարող եմ ասել, որ մեր նախաձեռնությունը տեղին էր, եւ խաղաղ զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարը տեղափոխելով՝ ամենեւին չենք խամրեցրել մեր համաքաղաքացիների հիշատակը: Ավելին, եթե նախկինում այստեղ տարին մեկ անգամ էինք այցելում, ապա հիմա յուրաքանչյուր տոնական ու հիշատակի օր հարգանքի տուրք կմատուցենք նաեւ այստեղ՝ ամեն անգամ համոզվելով, թե ինչքան թանկ ենք վճարել այսօրվա խաղաղության համար: Հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին այս թաղամասը շատ է տուժել հրետակոծություններից ու ռմբահարությունից: Ավելի քան վստահ եմ, որ խաղաղության արժեքն այստեղ լավ գիտեն: Ես համոզված եմ, որ մյուս թաղամասերում նույնպես կառուցվելու են նմանատիպ պուրակներ: Հուսով եմ, որ այդ ժամանակ եւս երկու հզոր ձեռնարկության ղեկավարները մեր կողքին են լինելու: Շնորհակալ եմ շինարարներին, վարպետներին, բանվորներին: Թող այս պուրակը միշտ մարդաշատ լինի, առավել շատ լինեն երեխաները, ու հարատեւի հաստատված խաղաղությունը: 1600 տարվա պատմություն ունեցող մեր քաղաքը հերթական անգամ տոնում է իր օրը: Ու հիմա մեր գերխնդիրն է բարի գործերով, զարգացման հեռանկարային ծրագրերով մի քանի քայլ առաջ տանել մեր համայնքն ու սերունդների համար մնալ պատմության էջերում: Կասկածից վեր է, որ կապանյան օրերն արդեն ավանդական են դարձել, ու եթե փոխվում են տոնի ձեւն ու բովանդակությունը, նույնն են մնում այն ոգեւորությունն ու նվիրումը, որոնցով կապանցին սպասում է այդ տոնին: Կրկին, ավանդույթի ուժով, մենք ամփոփում ենք արածներն ու անելիքների համար ճամփա հարթում՝ ամբողջացնելով մեր նախաձեռնությունները: Առանց ավելորդ համեստության կարող եմ ասել, որ մեր հյուրերի, բարերարների, գործընկերների առջեւ մենք հպարտանալու շատ առիթներ ունենք: Այս տոնը դրա վառ ապացույցն է. «Մանուկներին՝ խաղահրապարակներ» ծրագրով, Վորլդ Վիժնի Կապանի տարածքային զարգացման գրասենյակի հետ համատեղ խաղահրապարակներ ենք շահագործման հանձնել, արդեն երկրորդ տարին է՝ «Աջակցություն՝ բազմազավակներին» ծրագրով երեք տասնյակից ավելի ընտանիքներ տարբեր օգնություններ են ստանում: Կուզենայի հայտարարել նաեւ նոր նախագծի մասին, որը մեկնարկում է այսօր՝ Տարեցների միջազգային օրը: «Արժանապատիվ ծերություն»՝ այսպես է կոչվում համայնքային բարեգործական հերթական ծրագիրը: Վստահեցնում եմ, որ տարեվերջին արձանագրելու ենք, որ այս նախագիծը եւս պսակվել է հաջողությամբ:*

Ուզում եմ առանձնահատուկ ջերմ խոսքեր ուղղել մեր մանկավարժներին՝ մասնագիտական առաջիկա տոնի առթիվ: Քաղաքապետարանն իր հնարավորությունների սահմաններում, նույնիսկ ավելին, ձգտում է ուշադրության կենտրոնում պահել կրթօջախների խնդիրներն ու մեծարել ուսուցչին:

Շնորհավորում եմ կրկին մեր քաղաքի տոնը ու բոլորիս բարեկեցություն մաղթում»:

Այնուհետեւ ելույթ ունեցավ Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյանը: Նա եւս շնորհավորեց կապանցիներին՝ պուրակի բացման առիթով եւ մաղթեց, որ նորաբաց պուրակը նրանց բերի ուրախություն, որ այն նպաստի խաղաղության հարատեւմանը:

Քաղաքապետ Ա.Աթայանը «Կապան» ոսկե մեդալով պարգեւատրեց «Դանդի փրիշս մեթլզ» ընկերության նախագահ եւ գործադիր տնօրեն Ջոնաթան Գուդմանին՝ Կապանում իրականացված բազմաթիվ ծրագրերին աջակցելու համար»:

Բացման արարողությունը եզրափակվեց համերգով, որ կազմակերպել էր Կապանի քաղաքապետարանի մշակույթի բաժինը:

Խաղաղության պուրակի կառուցման նախահաշվային արժեքը կազմել է 54 մլն դրամ, հիմնական աշխատանքները գրեթե ավարտվել են, մնում են միայն շատրվանի լուսային մեխանիզմների ձեռքբերումն ու տեղադրումը: Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Զովա» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Անի Համբարձումյան), եւ տեւել է շուրջ մեկ տարի: Կատարվել են տարածքի բարեկարգման, հողային հարթեցման աշխատանքներ, կանաչապատում եւ սալիկապատում, տեղադրվել են նստարաններ, մանկական կարուսելներ, շատրվան: Պուրակի կառուցող ճարտարապետ Վահե Գրիգորյանի խոսքով՝ նախնական արդյունքները գոհացուցիչ են, կատարվել է շատրվանի ջրային համակարգի փորձարկում, իսկ համապատասխան մեխանիզմների տեղադրումից հետո այն կգործի եկող տարվա ամռանը:

«Կապանյան օրեր» միջոցառման շրջանակներում Կապանի քաղաքապետը եւ Սյունիքի մարզպետն այցելեցին Կապանի Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարան, որտեղ տոնի առիթով կազմակերպվել էր ցուցադրություն: Մարզպետ Ս.Խաչատրյանը զրուցեց թանգարանի աշխատակիցների հետ, տեղեկացավ թանգարանի վիճակին, առաջնային խնդիրներին, խոստացավ աջակցել թանգարանի բարենորոգման հետագա աշխատանքներին: Տոնակատարության կազմակերպիչներն այնուհետեւ մասնակցեցին Բաղաբերդ թաղամասում մանկական խաղահրապարակի բացմանը, որտեղ նույնպես հնչեցին շնորհավորանքի խոսքեր ու բարեմաղթանքներ:

ԱՂԱՎՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Կցուցադրվում է հիմք. ընտիրտուտ

Կցուցադրվում է հիմք. ընտիրտուտ

Colour Pages_5-12.indd 6 25.11.11 4:18:02 PM

№ 18 237
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՔԻ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 ● (091) 45 90 47 ● (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

Կապանի տուր
Սյունյաց երկիր
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ

Պաշտոնական ընդունելություն եւ հարգանքի տուրք

2 հոկտեմբերի 2011թ., ԵԿՄ Կապանի բաժանմունքի ներկայացուցիչները՝ բաժանմունքի նախագահ Մանվել Օհանյանի գլխավորությամբ, «Ազատամարտ» կոմիտեի ներկայացուցիչները՝ կոմիտեի նախագահ Խորեն Հարությունյանի գլխավորությամբ, Բաղաբուրջի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցեցին նահատակված զինակից ընկերներին:

Ձախից աջ՝ Ալիկ Գրիգորյան, Կարո Բադալյան, Սամվել Խուդագուլյան, Խորեն Հարությունյան, Արամայիս Հարությունյան, Մանվել Օհանյան, Մեսրոպ Արզումանյան, Արարատ Մանուչարյան, Արթուր Մարտիրոսյան, Սուրիկ Հովսեփյան, Գարիկ Ներսիսյան, Վարդան Հարությունյան, Լեոնիդ Գրիգորյան, Դավիթ Հարությունյան, Էմիլ Հարությունյան, Կարեն Գալստյան, Գագիկ Գրիգորյան:

Նախորդ օրվա անբարենպաստ եղանակից հետո հոկտեմբերի 2-ն արեւով բացվեց Կապանի վրա: Քաղաքի տոնին նվիրված միջոցառումները մեկնարկեցին քաղաքապետարանից, որի առջեւ զինվորական նվագախումբը տոնական մեղեդիներ էր հնչեցնում: Մտերմիկ մթոլորտ էր տիրում քաղաքապետարանի պուրակում, երկար ժամանակ իրար չհանդիպած մարդկանց զրույցն էր ծայր առել, անպակաս էին շնորհավորանքները: Ոմանք էլ առիթը բաց չէին թողնում վայելելու տոնի առթիվ պատրաստված տպավորիչ տորթից մի պատառ: Քաղաքապետարանում կայացած ընդունելությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, Հայրենական պատերազմի եւ աշխատանքի վետերաններ, Կապանի ավագանու անդամներ, մարզի համայնքների ղեկավարներ, քաղաքի ամենախոշոր ձեռնարկության՝ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ սեփականատեր, կանադական «Դանդի փրիշըս մեթլըզ» ընկերության նախագահ եւ գործադիր տնօրեն Ջոնաթան Գուդմանը, «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ տնօրեն Իլյա Գարկովը: Տոնի առթիվ բարեմաղթանքի խոսքեր հղեցին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, Կապանի քաղաքապետ Արտուր Աթայանը: Երկրորդ աշխարհամարտի մասնակից Գարեգին Գեւորգյանը պատերազմի եւ աշխատանքի վետերանների անունից երախտագիտության խոսք ասաց տոնի կազմակերպիչներին եւ հայտնեց՝ քանի դեռ վետերանները շարքում են, իրենց խորհուրդներով օգտակար կլինեն ներկա սերնդին: Օրվա խորհրդին պատշաճող խոսքեր հնչեցրին Կապանի պատվավոր քաղաքացիներ Սվետլանա Գեւորգյանը, Հասմիկ Համբարձումյանը: Ելույթ ունեցան Գրիգոր Գեւունցը եւ ուրիշներ:

Այնուհետեւ տոնակատարության մասնակիցները բարձրացան Բաղաբուրջի հուշահամալիր: Նախ՝ հարգանքի տուրք մատուցվեց երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտերում ընկածների հիշատակին, այնուհետեւ ծաղիկներ դրվեցին մերօրյա ազատամարտում զոհվածների շիրիմներին, ծաղկեպսակներ՝ Արցախյան պատերազմում անհայտ կորածների խաչքար-հուշաքարին եւ մերօրյա ազատամարտում մեր հաղթանակի խորհրդանիշ դարձած զրահամեքենայի պատվանդանին:

Մարդաշատ էր հատկապես մարզկենտրոնի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու շրջակայքը: Եկեղեցում մատուցվեց պատարագ, իսկ եկեղեցու բակում մատաղի արարողություն էր՝ ի նշան այն բանի, որ հուլիսի 16-ին Կապանի N2 ավագ դպրոցի փլուզման ժամանակ անմեղ զոհեր չեղան:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կապանի երկրագիտական թանգարանը կապանցու հիշողությունն է

Կապանի երկրագիտական թանգարանում դեռեւս չեն ավարտվել հիմնանորոգման աշխատանքները: Բայց, այնուամենայնիվ, նրա կոլեկտիվը քաղաքի տոնի առթիվ արդեն վերանորոգված մի հարկաբաժնում ցուցադրություն էր կազմակերպել, որը «Հիշողություն» խորագիրն էր կրում: Ցուցադրանքը հիմնականում ընդգրկում էր 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի ժամանակահատվածը, ինչը, ըստ թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանի, առատ նյութ կարող է տալ ուսումնասիրողին Կապանի տարածաշրջանի մասին: Ներկայացված էին 20-րդ դարի սկզբի ճանաչված գերդաստանները (Փարսադանյաններ, Մելիք-Քարամյաններ, Աղամյաններ, Նուբարյաններ): «Լույս խավարի մեջ» խորագրի ներքո ցուցադրվածից կարելի էր որոշակի պատկերացում կազմել դարասկզբի հայ դպրոցի գործունեության մասին: Հավուր պատշաճի ներկայացված էին Կապանի բարերարները (Նուբարյաններ, Գասպար Տեր-Մարգարյանց, Սմբատ Մելիք-Ստեփանյան):

Դարասկզբին Կապանը հայտնի էր ինքնապաշտպանական մարտերով: 1905-1906թթ. հայ-թաթարական բախումները պատմագիտության սակավ ուսումնասիրված էջերից են: Թանգարանում աշխատանքներ են տարվում լույս սփռելու այդ իրադարձությունների վրա: Ցուցադրանքում պատշաճ տեղ էր հատկացված Լեռնահայաստանի գոյամարտին եւ նրա հերոսներին: Յուրաքանչյուր բաժնում ներկայացված էին վավերագրեր, անձնական իրեր, թերթային հրապարակումներ, իսկ գոյամարտի վերաբերյալ բաժնում՝ զենքեր, որոնցով մեր պապերը դարասկզբին կռվել են հակառակորդի դեմ:

Երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը թանգարան այցելած հյուրերին բացատրություններ տվեց կազմակերպված ցուցադրանքի մասին:

Քաղաքի տոնի առթիվ Լեռնագործների, Շինարարների թաղամասերում բացվեցին մանկական խաղահրապարակներ: Տոնակատարության մասնակիցներն ու հյուրերը ներկա եղան մանուկների ժամանցի կազմակերպմանը նպաստող այդ օջախների բացման արարողություններին, ինչպես նաեւ՝ Գլենդելի հայ բարերարների աջակցությամբ նորոգ տեսք ստացած N4 մանկապարտեզի վերաբացմանը: Իսկ երեկոյան քաղաքային մարզադաշտում մենահամերգով հանդես եկավ երգիչ Արման Հովհաննիսյանը: Քաղաքի տոնին նվիրված երկօրյա հանդիսությունների շարքը եզրափակվեց հրավառությամբ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կապանի երկրագիտական թանգարանի գլխավոր մասնաշենքը՝ հիմնանորոգման աշխատանքների ավարտական փուլում

Դրվագ «Հիշողություն» խորագիրը կրող ցուցադրությունից

Colour Pages_5-12.indd 7
25.11.11 4:18:02 PM

Կարմիր տուր
Սյունյաց երկիր
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02
էլ.հասցե՝ www.syuniacyerkir.am
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 18 237
25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011

Վրոմակրոմպիւէ՝ Ամոնդարոնը

Բնաշխարհ

Զորքը՝ Վահանավանքի տիրական ներկայությամբ

ՊՈԵԶԻԱ

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ

ՋՔԱՂՑՐԻԿ ԹՌՉՆՈՑ ԿԱՔԱՒՈՒՑ

Փութա՛ առ մեզ, նաղշուն կաքաւ,
Մարերն ամէն կանաչացաւ,
Զարդ ըզգեցեալ պայծառացաւ.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս,
Ցաւուրս գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս,
Արա՛գ-արա՛գ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՛, գախգըղա՛, գախգըղա՛:
Մի՛շտ հառաչես ու կարկաչես:
Ոսկիափայլ փեղուր քոյին՝
Զանազան գունով շողշողին,
Որպէս ըզլոյս բոլորովին.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս,
Ցաւուրս գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս.
Արա՛գ-արա՛գ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՛, գախգըղա՛, գախգըղա՛,
Մի՛շտ հառաչես ու կարկաչես:

Փառօք ճեմիս որպէս իշխան,
Լերինքըն քեզ յարկ սեպհական,
Դաշտերն ամէն համանգամայն.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս,
Ցաւուրս գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս,
Արա՛գ-արա՛գ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՛, գախգըղա՛, գախգըղա՛,
Մի՛շտ հառաչես ու կարկաչես:

Ծիծաղաձայն քաղցրիկ թըռչուն,
Չըքնաղապիպ եւ յոյժ սիրուն,
Ի մէջ ծաղկանց նընջես ի քուն.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս,
Ցաւուրս գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս,
Արա՛գ-արա՛գ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՝, գախգըղա՛, գախգըղա՛,
Մի՛շտ հառաչես ու կարկաչես:

Վարդն ու շուշանըն շաղամած,
Եւ մանուշակըն անդառաց՝
Բարձք ւ անկողինք քեզ վայելեաց.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս,
Ցաւուր գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս,
Արա՛գ-արա՛գ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՛, գախգըղա՛, գախգըղա՛,
Մի՛շտ հառաչես ու կարկաչես:

Այդ լեռներու հուպ առընթեր,
Դէպ զառ ի վայր եւ զառ ի վեր՝
Թերաբաց թեւովք ճեմս առեր.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս.
Ցաւուր գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս,
Արա՛գ-արա՛գ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՛, գախգըղա՛, գախգըղա՛,
Մի՛շտ հառաչես ու կարկաչես:

Կարկաչական այդ ձայն քո սուրբ
Տոչորէ զիս՝ սիրոյ քոյ հուրը,
Չեր զովանալ արտասուաց ջուրը.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս.
Ցաւուր գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս
Արա՛գ-արա՛գ ոստոստելով
Ծաղկանց վերայ թաւալելով.
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս.
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՛, գախգըղա՛, գախգըղա՛,
Մի՛շտ հառաչես ու կարկաչես:
Քեւ ճոխանան ամէն լերինք
Եւ համօրէն մարգագետինք,
Ըզքեզ գովեն ազգք եւ ազինք.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս,
Ցաւուր գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս.
Արա՛գ-արա՛գ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՛, գախգըղա՛, գախգըղա՛,
Մի՛շտ հառաչես ու կարկաչես:

Ա՛րդ, բարձրացո՛ զձայն քո ըստ իս,
Եւ փարատեա՛ ըզսուգ սրտիս,
Հայցմամբ քոյոյ երգաբանիս.
Ցայդ լեռներէն ի վայր փութաս,
Ցաւուր գարնան պարեալ ցնծաս,
Նաղշուն ձագերով շուրջ կուգաս,
Արա՛գ-արա՛գ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ո՞յր թըռչիս,
Ընդէ՞ր փախչիս,
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով ձայն արձակես,
Գախգըղա՛, գախգըղա՛, գախգըղա՛,
Մի՛շտ հառաչես ու կարկաչես: